

է այլուր, անհրաժեշտ է սփյուռքահայ բազմացրիվ ու լույսածավալ մամուլի ցարդ անձանոթ մասը լույսին բերել: Եւման աշխատանքի մը համար հարկ է սակայն շղթանալ անցյալին փոխանցված կամ ուրիշներն լրացված ցուցակներով, որոնք բավարար չեն ապու վերջնական թիվը հայ պարբերական մամուլին: Ան այդ կկարծենք թե կարելի էր լավագույն արդյունքներու հասնիլ, կապ հաստատելով սփյուռքահայ մեր կարևոր գրապահոցներու և գրական շրջանակներու հետ (զույգ մը Մխիթարյան հաստատություններ, Փարիզի նուպարյան Մատենադարան, Երուսաղեմի Վանք, Կ. Պոլիս ևլն., հրատարակչություններ, թերթերու խմբագրություն, գրավաճառանոցներ, միություններ, անհայտ մտավորականներ ևլն.): Եվ իրավասություն, փոխանակության և ի հար-

կին՝ վճարման փոխարեն, հետամուտ ըլլալ, մասնավոր հարցարաններու օժանդակութեամբ ամբողջացնելու Հայաստանի գրապահոցներուն մեջ պակասող պարբերականներու հավարածուները, կամ անվազն ունենալ հշգրիտ տեղեկություններ անոնց մասին:

Այս նախապատրաստական, բայց էական աշխատանքն հետո ինքնին անհրաժեշտ կզատնա պատրաստությունը նաև հիմնովին վերամշակված նոր բիրլիոգրաֆիայի մը, որուն վերին հակոզությունն ու կազմակերպումն ի պաշտոնե պետք է ստանձնէ Հայկական ՍՍԻ Պետական Գրապատար, առ այդ սերտ համագործակցության հրավիրելով այդ պատասխանատու գործին հմուտ անձեր:

ՆԵՐՍԵՍ ԳԱՍԿՅԱՆ

Պլովդիվ (Բուլղարիա)

Ս. Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ, Միջին հայերեն, Հայկական ՍՍԻ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960, 301 էջ, գինը 94 կ.:

1960 թ. Հայկական ՍՍԻ ԳԱ հրատարակչութեամբ լույս տեսավ պրոֆ. Ս. Ղազարյանի «Միջին հայերեն» աշխատության առաջին գիրքը, որը նվիրված է միջին հայերենի հնչյունաբանության մանրակրկիտ հետազոտմանը:

Միջին հայերենը հայ գրական լեզվի պատմության երեք փուլերից մեկն է, որո հաջորդել է մեր հին գրական լեզվին՝ գրարարին (V—X դդ.) և նախորդել նոր գրական լեզվին՝ աշխարհարարին (XVII—XX դդ.):

Միջին հայերենը գրական լեզուն վիթխարի գեղ է իրապայել հայ ժողովրդի Պլանրում, հատկապես նրա մշակույթի զարգացման ու մտավոր կյանքի առաջընթացի գործում: Հաջողությամբ կատարելով գրական լեզվի ֆունկցիաները, իր գոյության ընթացքում նա ունեցել և կատարել է հասարակական կարևոր գեր: Միջին հայերենը X դարում արդեն անհասկանալի դարձած գրարարի իրավունքները սահմանափակող, նրա ֆունկցիաներն ու հասարակական գերը ստանձնող և հետագա աշխարհարար գրական լեզուն նախապատրաստող մի անհրաժեշտ ու յուրատեսակ միջին օղակ էր: Արդի հայ գրական լեզվի բազմաթիվ իրողություններ ձևավորվել ու մշակվել են հայ գրական լեզվի միջին շրջանում և ուղղակի կապվում են միջին հայերենի հետ:

Ասվածից երևում է, թե որքան կարևոր նշանակություն ունի միջին հայերենի ուսումնասիրությունը: Եթե սրան ավելացնելու չի-

եննր նաև այն, որ գրաբար և աշխարհարար գրական լեզուների համեմատությամբ միջին հայերենն անհամեմատ քիչ է հետազոտվել և որ առ այսօր հրատարակի վրա չկա այդ գրական լեզվի մանրամասն ամբողջական նկարագիրն ու նրա պատմության շարադրանքը, որից կարողանան օգտվել մեր բուհերի մասնագիտական ֆակուլտետների ուսանողներն ու հայոց լեզվի պատմությամբ հետաքրքրվողները, ինքնին պարզ կզատնա, թե որքան շնորհակալ գործ է կատարել պրոֆ. Ս. Ղազարյանը՝ ձեռնարկելով միջին հայերենի մանրամասն ուսումնասիրությունը:

Պրոֆ. Ս. Ղազարյանի «Միջին հայերեն» աշխատության հիշյալ գիրքը բազկացած է երկու հիմնական մասից՝ «ներածական մաս» և «Միջին հայերեն»:

Առաջին մասում հեղինակը համառոտ, բայց բավականաչափ հաջող ներկայացրել է հայ հին գրական լեզվի՝ գրարարի լեզվական հիմնական առանձնահատկություններն ու հետագա փոփոխությունները: Սա շատ կարևոր է թե՛ միջին հայերենին նախորդող շրջանի լեզվական որակի մասին մի ամբողջական պատկերացում կազմելու, թե՛ գրարարի ու միջին հայերենի լեզվական իրողությունները համեմատելու, թե՛ գրական լեզվի փոփոխության ընթացքն առավել լավ պատկերացնելու տեսակետից:

Գրարարն ունեցել է իր հնչյունական համակարգը և միջին հայերենից տարբեր իր

Տնչյունական օրինաչափությունները (բաղաձայնական եռաստիճան սիսեմ, երկրարբանները ու եռարբանների առկայություն, գրություն ու արտասանության համապատասխանություն և այլն)։ Գրերի ընթացքում մշակվել է գրարարի բերականական կառուցվածքը, առաջ է եկել հոլովման, խոնարհման, բառերի ու նախադասությունների կապակցության կուռ սիսեմ՝ բերականական յուրահատուկ օրենքներով (հոլովական հատուկ վերջավորություններ, պարզ Ա, Ե, Ի, ՈՒ, Ո և խառն Ի—Ա, Ո—Ա հոլովումներ, ներկայի և կատարյալի հիմքերից կազմվող բայի զիմավոր ու անդեմ յուրահատուկ ձևեր, կրավորակուն խոնարհման հատուկ արտահայտություն, որոշիչների ու հատկացուցիչների լրացյալներից ետագա գործածություն, թվով ու հոլովով նրանց համաձայնություն և այլն)։ Ստեղծվել է ժամանակի պահանջները բավարարող հարուստ բառապաշար՝ բառակազմական լայն նարավորություններով (բարդություն, ածանցում)։

Գրարարը, որ սկսած IV դարի վերջերից միակ հայ գրական լեզուն էր մինչև միջին հայերենի՝ գրական լեզու դառնալու ժամանակաշրջանը, անփոփոխ չի մնացել։ Սկսած VI դարից գրարարը ավելի ևս հեռանում է իր խոսակցական հիմքից, ավելի են հաճախանում գրարարի նորմաներից կատարվող շեղումները, առաջանում են Տնչյունական, բերականական ու բառապաշարային նորանոր տարբերություններ։ Գրախոսվող աշխատության մեջ բնդհանուր առմամբ լավ են ներկայացված գրարարի Տնչյունական կազմի, բերականության ու բառապաշարի այդ փոփոխությունները, այլև հայերենի մեջ կատարված սեղաշարժերի բնույթը, ընթացքը և պատճառները։

Աշխատության հաջորդ և հիմնական մասը նվիրված է միջին հայերենի Տնչյունարանության ուսումնասիրությանը, բայց նախքան Տնչյունական համակարգի բնույթանն անցնելը հեղինակը ճիշտ կերպով բնութագրում է երկու կարևոր հարց՝ միջին հայերենի կազմավորման նախադրյալները և միջնադարյան հայ գրականության լեզվական ստանձնահատկությունները։

Պրոֆ. Ս. Ղազարյանը ամփոփ և բնդհանուր սուսամբ ճիշտ է ներկայացրել պատմահասարակական այն միջավայրը, որտեղ կազմավորվել է միջին հայերենը, հաջող է բնութագրել ժամանակաշրջանը և տնտեսական, քաղաքական ու կուլտուրական այն նախադրյալները, որոնցով պայմանավորված են գարավոր արդիցիա ունեցող հայերեն գրական հին

լեզվի՝ գրարարի մահացումը և նոր գրական լեզվի՝ միջին հայերենի առաջացումը։

Հայանի է, որ միջին հայերենը համեմատարար կարճ կյանք է ունեցել, բայց գրանով գրվել ու պահպանվել է բավականաչափ հարուստ գրականություն, որը նորություն էր ոչ միայն իր բաղաձայն բնույթով ու բովանդակությամբ, այլև ղեղեցիկ արվեստով ու հետաքրքիր լեզվով։ Միջին հայերենով գրվել են ղեղարվեստական (արձակ և շափածո), պատմական, գիտական (բժշկական, իրավաբանական, փիլիսոփայական և այլն) շատ գործեր, պետական ու պաշտոնական վավերագրեր, որոնց լեզուն միասնական ու բնդհանուր էր իր բերականական կառուցվածքով և հիմնական բառաֆոնդով, բայց տարբերվում էր իր ոճով, բառային կազմով ու գրարարի լեզվական տարբերի օգտագործման շափով։ Այսպես օրինակ, Եթե ղեղարվեստական գրականության լեզուն աչքի էր բնկնում ժողովրդական լեզվի ոճերի ու լեզվական օրինաչափությունների առատ գործածությամբ, ապա պատմական և հատկապես կրոնական բովանդակություն ունեցող երկերի լեզուն աչքի էր բնկնում գրարարյան լեզվաձևերի առատ օգտագործմամբ, իսկ գիտական գրականությունը՝ մասնագիտական հարուստ բառ-տերմինների մշակմամբ։ Միջնադարյան հայ գրականության այս և շատ ուրիշ լեզվական յուրահատկություններ պարզելուց հետո հեղինակը ներկայացնում է միջին հայերենի Տնչյունական համակարգի մանրամասն ուսումնասիրությունը՝ առանձին-առանձին կանգ առնելով յուրաքանչյուր ձայնավոր ու բաղաձայն Տնչյունի նկարագրի, Տնչյունական փոփոխության ամեն մի դեպքի, տառադարձության վրա։

Խոսելով ձայնավոր Տնչյունների մասին և նշելով, որ «միջին հայերենում... հայերենի ձայնավորները հիմնականում պահպանել էին իրենց սրակը» (Լջ 143), հեղինակը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս, որ «X դարում Ե և Է տառերը շունեին V դարի Տնչյունական տարբերությունները» (Լջ 145), որ «Ա և Ե Տնչյունները որոշ դիրքերում փոխել էին իրենց հին արտասանությունը» (Լջ 144), որ Ա հրչյունը միջին հայերենում թեև ուներ իր կայուն արժեքը, բայց «Ա տառը տարբեր դիրքերում հանդես էր գալիս տարբեր արտասանությամբ» (Ա և Վ, Լջ 143), որ Ը ձայնավորը հաճախ հանդես էր գալիս նոր նրբերանդներով։

Միջին հայերենում մեծ փոփոխության են ենթարկվում գրարարյան երկարբանները, որպես կանոն գրանք վերածվում են պարզ ձայն-

նազոնների ($l_k > 0$, $l_3 > l_k$ և այլն կամ երկ-
հնչյունների ($l_i > l^i$, $l_i > l^i$ և այլն):

Միջին հայերենում քիչ փոփոխության չեն
ենթարկվել նաև բաղաձայնները, որն արտա-
հայտում է գրարարյան ձայնեղների խլացման
կամ շնչեղ-խլացման և խուլերի ձայնեղացման.
բարդ բաղաձայնների արտասանության փոփո-
խության, ձայնորդների մեջ կատարված տե-
ղադարձերի (β և ϵ ձայնորդների նույնա-
ցում ζ և ψ հնչյունների հետ և այլն), նոր
հնչյունի (ϕ) և նոր գրերի (օ. ϕ) ավելացման
և այլ ձևերով:

Հեղինակը ոչ միայն ներկայացրել է հրն-
չյունական փոփոխությունները, այլև, որ նույն-
պես կարևոր է, պարզել է դրանց պատճառնե-
րը, ցույց տալով, որ հայերեն հին գրական
լեզվի հնչյունական համակարգը փոխվում է, և
հնչյունական նոր երևույթներ են առաջանում
ամենից առաջ շնորհիվ այդ լեզվի ներքին
օրենքների ծավալման ու դարգացման, հին
սրակի տարրերի աստիճանական մահացման և
նորերի առաջացման ու կուտակման, մասամբ
և այլ լեզուների ազդեցության:

Միջին հայերենի հնչյունական համակարգի
ուսումնասիրությունն ամբողջացնելու, նրա ու
գրարարի հնչյունական երևույթները լավ պատ-
կերացնելու և հատկապես ժամանակակից հա-
յերենի հնչյունական շատ իրողություններ ճիշտ
բացատրելու տեսակետից առանձնակի կարևորու-
թյուն է ստանում աշխատության «Հնչյունական
փոփոխություններ» գլուխը, որի մեջ փաստա-
կան հարուստ նյութի օգտագործմամբ արված
են բոլոր հնչյունների ու երկրարրառների փո-
փոխությունները և ցույց է տրված դրանց
պատմական զարգացման ընթացքը:

Այսպիսով, պրոֆ. Ս. Ղազարյանի աշխա-
տության կարևոր արժանիքներից մեկը ամե-
նից առաջ այն է, որ նրա մեջ մանրամասնո-
րեն և ընդհանուր առմամբ ճիշտ ներկայաց-
ված է հայոց գրական լեզվի միջին շրջանի
նկարագիրը: Այս գրքում սխտեմավորված ու
նպատակահարմար ձևով արված են միջին հա-
յերենի հնչյունական գրեթե բոլոր հիմնական
իրողություններն ու երևույթները: Կարևոր ու
գնահատելի է, որ հեղինակը լեզվական այդ
իրողություններն ու երևույթները ներկայացրել
է իրենց պատմական զարգացման պրոցեսում,
ըսթացրի մեջ, և ոչ թե բարացած վիճակում:

Մարքսիստական լեզվաբանությունը սովո-
րեցնում է, որ լեզուն և նրա պատմությունը
կարելի է և պետք է ուսումնասիրել միայն այդ
լեզուն ստեղծող ու կրող ժողովրդի պատմու-
թյան հետ սերտորեն կապված: Հեղինակը,
օրինակ, գրարարի կրախը և միջին հայերենի

կազմավորումը ճիշտ կերպով բնութագրում է «—
դարերում հայ ժողովրդի անտեսական, բաղա-
քական և կուլտուրական կյանքում տեղի ունե-
ցած էական փոփոխությունների ֆոնի վրա:
Պորցնելով պետական լեզվի իր ֆունկցիան, են-
թարկվելով այլ լեզուների ազդեցության, աս-
տիճանաբար հեռանալով ժողովրդական խո-
սակցական լեզվից՝ «գեղջուկ բանից» և ան-
ընդհատ ընդունելով վերջինիս ներթափանցում-
ները, գրարարը X դարից սկսած իր տեղը կա-
մուց-կամաց դիջում է միջին հայերենին: «Մի-
ջին հայերենի կազմավորումը զուգադրյալ է
հայ ժողովրդի կյանքում կատարված պատմա-
կան փոփոխությունների՝ աբարական բունակա-
լության վերացման, հայ պետականության
հաստատման, ֆեոդալական հարաբերություն-
ների ամրացման ու դարգացման, Հայաստանի
անտեսական ու կուլտուրական կյանքի վերելքի
հետ» (էջ 67):

Հարուստ ու բազմազան են հեղինակի հա-
վարած և օգտագործած լեզվական փաստական
նյութերը: Նա իրավագիտորեն չի բավարարվել
միայն միջին հայերենի վերաբերյալ տալագիր
աշխատություններից արդեն պատրաստի նյու-
թեր հավաքելով և զգայվող մեծ պակասը
լրացրել է մի շարք արձանագրություններից ու
ձևագիր հիշատակարաններից բաղած լեզվա-
կան եարևոր ավյալներով: Սա հնարավորու-
թյուն է տվել հեղինակին նոր ու հետաքրքիր
փաստերով հիմնավորել կամ մերժել այս կամ
այն տեսակետը և կամ առաջադրել նոր խնդ-
իրներ, սահմանել օրինաչափություններ:

Զրուսելով այլևս գրքի այլ արժանիքների
մասին, համառոտակի կանգ առնենք նրա մի
բանի թերությունների ու սխալների վրա:

Ընդհանուր առմամբ ճիշտ որոշելով միջին
հայերենի տեղն ու դերը հայոց լեզվի պատմու-
թյան մեջ, պրոֆ. Ղազարյանը, մեր համոզ-
մամբ, չի կարողանում լուծել, ավելի ճիշտ՝
սխալ է լուծում երկու կարևոր հարց. 1) ո՞ր
բարբառն է եղել միջին հայերենի հիմքը,
2) կիրիկյան միջին հայերենը ի՞նչ չափով ընդ-
հանուր ու միասնական է եղել հայաբնակ բո-
լոր շրջանների համար:

Հեղինակի կարծիքով, բանի որ միջին հա-
յերենը ընդհանուր էր ամբողջ հայության հա-
մար, հետևաբար նա չէր ձևավորվել կիրիկիա-
յի բարբառի հիման վրա» (էջ 110), եթե նույն-
խակ ընդունելու էլ լինենք, որ միջին հայերենը
ընդհանուր էր ամբողջ հայության համար,
ապա այդ ամենին չի կարող լուրջ հիմք լի-
նել այդպիսի հետևության համար: Մեր այս
ասածը հաստատվում է հենց թեկուզ արևելա-
հայ գրական լեզվի օրինակով. նա ևս ընդհա-

նուր և հայություն համար, բայց, ինչպես րն-
դունում է նաև պրոֆ. Ղազարյանը, կազմավոր-
վել է Արարատյան (այսինքն՝ մեկ) բարբառի
հիման վրա¹։

Չի կարելի հիմնավոր համարել նաև այն
«փաստարկը», որ «Կիլիկյան բարբառը այն
ժամանակ, երբ ստեղծվեց Կիլիկյան հայկական
թագավորությունը, միասնական չէր. Կիլիկիա-
յում կային տարբեր բարբառներ, որովհետև
այնտեղի հայության քանակը աճում էր... X—
XI դարերում գաղթած հայ բնակիչներով,
որոնք երկար ժամանակ պետք է պահպանեին
իրենց բարբառները...» (էջ 92)։ Հեղինակը
սխալվում է, կարծելով, թե իբր տարբեր վայ-
րերից գաղթած հայերի մայրենի խոսվածքնե-
րի առկայությունն պայմաններում վերանում է
Կիլիկյան միասնական բարբառի գոյությունը²։
մյուս կողմից էլ հակասում է իր այն ասածին,
որ «միջին հայերենը իր ...բնդհանուր վիճակով
ուրվագծվում է X դարից սկսած» (էջ 193),
որի «բանավոր լեզվի ծագումը շատ ավելի հին
էր, քան պրավորը»³։

Հայագիտության մեջ ընդունված է և մեր
կարծիրով բավականաչափ հիմնավոր ցույց
տրված, որ գրականության մեջ հասած մի-
ջին հայերենի հիմքը եղել է Կիլիկիայի բար-
բառը, որ այդ «գրական լեզվի հիմքում ընկած
են Կիլիկիայի բարբառային-խոսակցական
նորմաները»⁴։ Պրոֆ. Հ. Աճառյանը ներսես
Օնորհատու հանելուկներից (գրված 1160—
1173 թթ.), Մխիթար Հերացի բժշկության
«Ջերմանց միսիթարությունից» (1184), Սմբա-
տի Գառաատանագրից (1265) և Լևոն Գ թա-
գավորի հրովարտակից (1288) բերած նմուշ-
ներով ցույց է տալիս, որ այդ «գործերը առ-
հասարակ կիլիկյան բարբառով են գրված»⁵։
Պրոֆ. Գ. Ջահուկյանը իրավացիորեն նկատում
է, որ «...միջին գրական հայերենի հիշատա-
կարանների գերակշռող մեծամասնությունը

արտացոլում է կիլիկյան բարբառի առանձնա-
հատկությունները»⁶։ Ամենաթեթև համեմատու-
թյունից իսկ երևում է, որ միջին հայերենի
հնչյունական համակարգը, հնչյունափոխու-
թյունը, գրարարյան երկրաբառների՝ պարզ
հնչյունների վերածումը, հոգնակի թվի կազմու-
թյունը, հոլովումն ու խոնարհումը, շարահյու-
սությունն ու շարադասությունը ամենից առաջ
կապվում են Կիլիկիայի բարբառի հետ⁷։ Մի-
ջին հայերենի հնչյունական ու քերականական
այն առանձնահատկությունները, որ սույն աշ-
խատության մեջ ներկայացրել է պրոֆ. Ղա-
զարյանը (էջ 96—113), մեծ մասամբ հատուկ
են Կիլիկիայի բարբառին։

Այս ամենից, իհարկե, չպետք է եզրակաց-
նել, թե միջին հայերենը նույնանում է Կիլի-
կիայի բարբառի հետ, ճիշտ այնպես, ինչպես
արդյո՞հայ գրական լեզուն երբևէ էլ չի նույնա-
նում Արարատյան բարբառի հետ և ամեն մի
գրական լեզու՝ իր մայր բարբառի հետ։ Բնչ-
պես բոլոր գրական լեզուները, այնպես էլ մի-
ջին հայերենը ժողովրդի խոսքային մշակույթի
ամենաբարձր արտահայտությունն է, Մ. Գոր-
կու բառերով ասած՝ «վարպետների կողմից
մշակված լեզու»։ Բացի գրանից, սխալ կլինի
կարծել, թե կազմավորվելով մեկ բարբառի
(Կիլիկիայի) հիմքի վրա, միջին հայերենը իր
կազմավորման ու ձևավորման շրջանում չի
օգտվել մյուս բարբառներից, որոնք սակայն
մեծ մասամբ հանդիսացել են միջին հայերենի
բառապաշարը հարստացնող աղբյուր։ Միջին
հայերենը, ինչպես հայտնի է, շատ է օգտվել
գրարարից, նրանից վերցնելով թե՛ հնչյունա-
կան, թե՛ քերականական շատ ու շատ իրողու-
թյուններ։

Հեղինակը սխալվում է նաև սրա հետ կապ
ունենող մեկ ուրիշ հարցում։ Նա կարծում է, թե
միջին հայերենը իր այն որակով, ինչ հանդես է
եկել Կիլիկյան հայկական պետության սահման-

1 Ս. Ղազարյան, Հայոց լեզվի հա-
մատու պատմություն, 1954, էջ 397։

2 Կարելի է հիշել նաև Ղարաբաղի բար-
բառը, որը նույնպես շատ միասնական է, թեև
Ղարաբաղում շատ կան թե՛ առանձին գյուղե-
րով, թե՛ խառն ապրող այլ բարբառներով
խոսողներ։

3 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատ-
մություն, հատ. 2, էջ 234։

4 Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի
պատմության պերիոդիզացիայի հարցերը, նրե-
վանի պետական համալսարանի «Գիտական
աշխատություններ», 1956, հատ. 57, մաս 1,
էջ 79։

5 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 238։

6 Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 66
(ընդգծումը մերն է—Ա. Գ.)։

7 Համեմատիք միջին հայերենի լեզվական
իրողությունները (Հ. Աճառյան, Հայոց
լեզվի պատմություն, հատ. 2, էջ 226—255, Ս.
Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատ-
մություն, էջ 231—331) Կիլիկիայի բարբառի
համապատասխան իրողությունների հետ (Հ.
Աճառյան, Հայ բարբառագիտություն, 1911,
էջ 199—211, Ա. Ղարիբյան, Համառո-
տություն հայ բարբառագիտության, 1911,
էջ 368—372, Ա. Գրիգորյան, Հայ բար-
բառագիտության պատմության, 1957, էջ 349—
362)։

ներում, նույնն է նրա սահմաններից դուրս հայկական միջավայրի լեզվական որակի հետ, որ միջին հայերենը հավասարապես բնդհանուր ու միասնական է եղել հայարնակ բոլոր վայրերում (էջ 92)։ Հեղինակի այս տեսակետը սոսկ ենթադրություն է։ Մենք ճիշտ ենք համարում պրոֆ. Շ. Կուսիկյանի այն տեսակետը, որ «ճիշտ չի լինի կարծել, թե միայն այդ (Կիլիկյան—Ա. Գ.) գրական լեզուն է մտնում միջին հայերեն հասկացության մեջ»¹, որ միջին գրերում առաջացել է միջին հայերենի առավագն երկու հոսանք, գրական լեզվի երկու տարբերակների ձևավորման պրոցես, որ «մի շարք ֆեոդալական իշխանությունների բաժանված Կենտրոնական Հայաստանում ևս տեղի է ունեցել մեկ ուրիշ միջին հայերենի կազմավորման ամանման պրոցես «մում» ճյուղի բարբառների հիման վրա»², միայն թե այս վերջինի համար հասարակական-բաղադրական պայմանները նպաստավոր չեն եղել (սելջուկների բարբարոսական արշավանքին մոնղոլականի հաջորդումը, պարսկական և օսմանյան բռնապետական ուժերի հաստատումը և այլն), եթե նկատի չունենանք Հայաստանի՝ վրաց Թաւար թագուհու իշխանության ներքո գտնվող այն փոքր մասը, որ որոշ աշխուժություն է ապրում հայ մատենագրությունը և նախադրյալներ են ստեղծվում հետագա նոր գրական լեզվի՝ աշխարհարարի կազմավորման համար։ Որոշ տեսակետից միջին հայերենը կարելի է համեմատել աշխարհարարի հետ. հայտնի է, որ աշխարհարար լեզուն հանդես է եկել իր երկու գրական տարբերակներով՝ արևելահայ և արևմտահայ, միջին հայերենն էլ, մեր կարծիքով, երկճյուղ է եղել՝ կիլիկյան և պայմանականորեն կոչենք՝ արևելյան։ Ինչպես արևմտահայ ու արևելահայ գրական լեզուներն ունեն լեզվական շատ բնդհանրություններ (երկուսն էլ, վերջին հաշվով, միևնույն լեզուն են), այնպես էլ միջին հայերենի կիլիկյան և արևելյան տարբերակներն են ունեցել ոչ բիշ բնդհանրություններ։ Այն փաստը, որ կիլիկյան միջին հայերենի անկումը մեծապես պայմանավորված էր կիլիկյան պետականության անկամամբ և այն իրողությունը, որ արևելահայ աշխարհարար լեզուն իր կազմավորման ու ձևավորման շրջանում (XVII—XVIII դդ.) նույնիսկ

այն չափով չողովեց կիլիկյան միջին հայերենից, ինչպես վերջինս՝ գրաբարից, իրենց հերթին վկայում են այն մասին, որ միջին հայերենը իր այդ որակով բնդհանուր չի եղել ամբողջ հայության համար, որ միջին հայերենը «ուներ իր զանազան ձևերը», «կիլիկյան հայերենը միջին հայերեններից մեկն էր միայն»։

Քննարկվող աշխատության մեջ կան հակասական մտքեր։ Այսպես օրինակ, մի տեղ իմանում ենք, որ «միջին հայերենը իր բնդհանուր վիճակով ուրվագծվում է X դարից սկսած» (էջ 93), որ այդ լեզվի «հիմնական առանձնահատկությունները ուրվագծվել են X դարից» (էջ 96), մի այլ տեղ իմանում ենք, որ միջին հայերենը նոր «սկսում է կազմավորվել X դարից» (էջ 113), իսկ մի այլ տեղ էլ, հակասելով սրան, հեղինակը պնդում է, որ «այդ նոր լեզվի (միջին հայերենի—Ա. Գ.) հնչյունական համակարգի հիմնական առանձնահատկությունները գրականության մեջ ներթափանցել են IX—X դարերում (էջ 96, բնդգծումները մերն են—Ա. Գ.)»։

Կան նաև ավելի փոքր կարգի սխալներ ու անճշտություններ, որոնց վրա կանգ չենք առնում։ Օրինակ, Ղարաբաղի բարբարոսում մենք զերանվան սեռական հոլովածին է մլ,ր կամ մոլ,ր, բայց ոչ երբեք մր,ր, ինչպես կարծում է հեղինակը (էջ 203), կրկնվում է մեջ ոչ թե Ա > Ը (էջ 297), այլ Ա ձայնավորը գտնվելով մեկ ուրիշ ձայնավորի (Ը-ի) մոտ՝ բնկել է, մի երևույթ, որ տարածված է բարբարոսներում, ուրեմն՝ կրկնվում է մեջ Ը-ն ԿԸ եղանակիչի է՝ ձայնավորն է, և ոչ թե Ա-ի հնչյունափոխությունը է առաջացած։

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ գրախոսվող աշխատությունը, իր որոշ վերլուծություններով հանդերձ, միջին հայերենի առաջմիակ բնդարձակ ու բնդհանուր առամար հաջող ուսումնասիրությունն է՝ զրված մարքսիստական լեզվաբանության արդի պահանջներով, փաստական հարուստ նյութի հիման վրա, գիտական ուշագրավ բնդհանրացումներով ու եզրակացություններով։ Այն շատ օգտակար դիրք է հայագիտության հետաքրքրվողների համար և լավ ձևնարկ՝ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

¹ И. К. Кусян, Очерки исторического синтаксиса литературного армянского языка, Москва, 1959, էջ 102։

² նույն տեղում։

¹ Շ. Կուսիկյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, էջ 238։

² նույն տեղում, էջ 253։